

Դիտողություններ և առաջարկություններ

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ Օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Օրենքի նախագծի վերաբերյալ

Ներկայացնում ենք «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության դիտողություններն ու առաջարկությունները ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) կողմից 01/11/2018թ. www.e-draft.am կայքում հրապարակված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ Օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենքի նախագիծ) վերաբերյալ:

ՊԵԿ-ը Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով առաջարկում է գործող ՀԿ-ի մասին ՀՀ Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը¹ շարադրել նոր խմբագրությամբ, այն է՝ *Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել սույն հոդվածով նախատեսված հաշվետվությունը*²:

Իսկ Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը «աղբյուր» բառից հետո առաջարկում է լրացնել նոր բովանդակությամբ, այն է՝ *«Ընդ որում հաշվետվության տարեկան մուտքերի (դրամական և գույքային) ստացման աղբյուրի հատվածը բաղկացած է հրապարակային և ոչ հրապարակային հատվածներից: Հաշվետվության հրապարակային հատվածը ներառում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների անվանումները, իրավաբանական անձանց անվանումները, ռեզիդենտությունը և կազմակերպական-իրավական ձևը, ֆիզիկական անձանց խումբը՝ ըստ իրականացրած մուտքերի չափերի: Հաշվետվության ոչ հրապարակային հատվածը ներառում է ֆիզիկական անձի՝ անունը, ազգանունը, իրականացրած մուտքի չափը, առկայության դեպքում նաև՝ անձնագրային տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, բնակության*

¹ Գործող Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մաս՝ «Եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցները), ապա Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել սույն հոդվածով նախատեսված հաշվետվությունը:

² 3. Կազմակերպության հաշվետվությունը ներառում է՝

1) իրականացրած ծրագրերի անվանումներն ու վայրերը.

2) տարեկան մուտքերի (դրամական և գույքային) ընդհանուր գումարը և ստացման աղբյուրը.

3) դրամական միջոցների և այլ գույքի օգտագործման, կանոնադրական նպատակներին ուղղված ծախսերը.

4) իրականացրած ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվություն.

5) անդամների, ինչպես նաև կամավորների թիվը (հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ), այդ թվում՝ նշում Կազմակերպության միջոցներից հաշվետու տարվա ընթացքում օգտվելու մասին.

6) Ժողովի և կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերի քանակը.

7) Կազմակերպության գտնվելու վայրը:

4. Այն Կազմակերպությունները, որոնց գույքի ստացման աղբյուր չեն հանդիսացել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանրային միջոցները, իրավունք ունեն Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակելու ինչպես սույն հոդվածով նախատեսված հաշվետվությունը, այնպես էլ իր գործունեության ցանկացած արդյունքի վերաբերյալ տեղեկություններ կամ նյութեր: Սույն հոդվածով նախատեսված հաշվետվությունը պահպանվում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված ժամկետում, որը չի կարող հինգ տարուց պակաս լինել:

կամ հաշվառման վայրի հասցեն, հեռախոսահամարը, որոնք հանդիսանում են հրապարակմանն ոչ ենթակա անձնական տվյալ և որի մշակումը, երրորդ անձանց փոխանցումը և օգտագործումն իրականացնում է Լիազոր մարմինը՝ Օրենքով սահմանված կարգով: Կայքում հրապարակվող հաշվետվության մեջ տարեկան մուտքերի ստացման աղբյուրին վերաբերող անձնական տվյալները կարող են ներառվել բացառապես հաշվետվությունը հրապարակող Կազմակերպության հայեցողությամբ՝ Օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում» բառերով:»

Գործող Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետն առաջարկում է *անդամների, ինչպես նաև կամավորների թվի փոխարեն ներկայացնել կազմակերպության անդամների, կամավորների անուններն ու ազգանունները, եթե հաշվետու տարվա ընթացքում նրանք օգտվել են Կազմակերպության դրամական միջոցներից:*

Ի դեպ, ՊԵԿ-ն իր այս առաջարկությունների հիմնավորումներում նշել է, որ Օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է Օրենքի կիրառման ընթացքում ի հայտ եկած տարրնթերցումները բացառելու, առկա ձևակերպումները հստակեցնելու, ինչպես նաև հանրային հաշվետվողականությունը ապահովելու հանգամանքներով: Իսկ ՊԵԿ-ի նախագահի 14/02/2019թ. հ. 93-Ա հրամանով հաստատված աշխատանքային խմբի անդրանիկ հանդիպման ժամանակ (26/02/2019թ.) պատասխանատու պաշտոնյանները հայտարարեցին, որ այդ առաջարկությունը պայմանավորված է նաև նրանով, որ ՊԵԿ-ն իր ուսումնասիրությունների արդյունքում բազմաթիվ չարաշահումներ է հայտնաբերել ոչ առևտրային կազմակերպությունների՝ հասարակական կազմակերպությունների ոլորտում, սակայն հրաժարվեցին հրապարակել և ներկայացնել իրենց այդ ուսումնասիրությունների արդյունքները:

Ինչն էլ թույլ է տալիս մեզ պնդելու, որ այդ հայտարարությունն արժանահավատ չէ. թե ինչպիսի կամ ինչ բնույթի չարաշահումներ են հայտնաբերվել ՀԿ-ների գործունեության ոլորտում կամ որ ՀԿ-ներն են եղել դրանք, մեզ անհայտ է: ՊԵԿ-ը, որպես Օրենքով ճանաչված լիազոր մարմին և որպես ոչ առևտրային կազմակերպությունների հետ սոցիալական գործընկեր, նա ևս պետք է լինի թափանցիկ և հաշվետու, ուստի գտնում ենք, որ ՊԵԿ-ը պետք է հրապարակի այդ չարաշահումների մասին իր ուսումնասիրությունների արդյունքները և հանրայնացնի այդ օրինախախտ ՀԿ-ների անվանումները, եթե դրանք առկա են:

Մեր խորին համոզմամբ, լիազոր մարմնի կողմից մշակված սույն Օրենքի նախագիծը գուրկ է մասնագիտական և իրավաբանական հիմնավորումներից: Ակնհայտ երևում է, որ դրանով ՀԿ-ների անկախությունն ու ինքնակառավարման սկզբունքը խաթարվելու է, ստեղծվելու է պետության կողմից նրանց գործունեությանն ուղղակի միջամտելու կամ խոչընդոտելու հնարավորություն, ինչը թե՛ ՀՀ սամանադրությամբ, թե՛ գործող Օրենքով արգելվում է: Մա ոչ այլ ինչ է, քան պետական ճնշման գործիք կամ մահակ: Հետևաբար, առաջարկվող լրացման և փոփոխությունների զգալի մասը գնահատում ենք որպես էական սպառնալիք Հայաստանի ՀԿ-ների նկատմամբ: Առաջարկվող փոփոխությունները չեն համապատասխանում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի կանոնակարգման ոլորտում առկա միջազգային փաստաթղթերի ոգուն,

մասնավորապես՝ *Եվրոպայի նախարարների կոմիտեի անդամ երկրներին ուղղված Rec(2007) 14 հանձնարարականի դրույթներին*³:

Նշված նախագծով առաջարկվող բոլոր ՀԿ-ների կողմից ֆինանսական հաշվետվությունների պարտադիր հրապարակումն ու ՊԵԿ-ի գործառույթների, մասնավորապես վերահսկողական լծակի, ընդլայնումն ավելորդ վարչարարություն և գործավարություն է, ինչու չէ նաև պետական միջոցների (ռեսուրսների) և ժամանակի անհարկի վատնում: Փաստորեն այս նախագիծը հակասության մեջ է մտնում նաև ՀՀ կառավարության կողմից տարվող օպտիմալացման քաղաքականության հետ, քանի որ ՀՀ կառավարությունը, մի կողմից, հայտարարում է, որ Կառավարությունում օպտիմալացումը ֆունկցիոնալ գործառույթների կրկնությունը բացառելու է, իսկ մյուս կողմից ՊԵԿ-ը փորձում է Օրենքով կրկնապատկել իր պարտավորությունների ու գործառույթների շրջանակը:

Բացի այդ, կրկնապատկվում է ոչ միայն լիազոր մարմնի գործառույթները, այլ նաև ոչ առևտրային կազմակերպությունների՝ ՀԿ-ների գործավարությունը, այն էլ այն դեպքում, երբ ՀԿ-ներն արդեն իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում էլեկտրոնային եղանակով ՊԵԿ-ին ներկայացնում են իրենց աշխատողների եկամտահարկի, սոցիալական այլ վճարների, ամսվա և տարվա ամփոփ հաշվետվությունները՝ իրենց աշխատողների ընդունման-ազատման վերաբերյալ, տարեկան եկամտի և տարեկան ծախսի ընդհանուր գումարների մասին, ինչպես նաև կամավորներ ունենալու և նրանց վճարելու դեպքում, այդ մասին անպայման հայտնվում է էլեկտրոնային հաշվետվության միջոցով:

Ավելին, գործող ՀԿ-ների ֆինանսական աղբյուրների մասին գերազանց տիրապետում են նաև Հայաստանի բանկերը: Գաղտնիք չէ, որ ՀԿ-ների կողմից ֆինանսական միջոցների մուտքերն ու ելքերն իրականացվում են բանկային ծառայությունների միջոցով, որոնց մասին տեղեկություններ ունեն և՛ լիազոր մարմինը, և՛ ՀՀ կենտրոնական բանկը: Այս հարցը կարգավորված է նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ Օրենքով (29-րդ հոդված): Իսկ եթե ընդունենք, որ դրամաշնորհները կամ հանգանակությունները կատարվում են առձեռն, առանց բանկային փոխանցմամբ, ապա դա միանշանակ որևէ ձևով չի կարող ապացուցվել, բացառությամբ ՀՀ քրեական օրենսդրության սահմանված կարգով:

Որպես կանոն, յուրաքանչյուր ՀԿ, իրականացնելով օտարերկրյա դրամաշնորհային ծրագրեր, դրամաշնորհ տրամադրող կազմակերպության հետ կնքում է համապատասխան պայմանագրեր: Տարվա կտրվածքով այդ ՀԿ-ներն իրականացնում են ֆինանսական աուդիտ, հիմնականում իրենց դոնորի կողմից ընտրված աուդիտորական ընկերությունների միջոցով:

Բացի այդ, Հայաստանում ակտիվ գործունեություն ծավալող ՀԿ-ները ունեն նաև իրենց պաշտոնական կայքը և էջ սոցիալական ցանցերում: Այնտեղ կարելի է գտնել նրանց մասին տեղեկություններ՝ կանոնադրություն, ղեկավար անձանց անուններ, գործունեության հասցե, քարտեզ, նպատակների ու առաքելությունների մասին տեղեկություններ, տարբեր տեսակի թեմատիկ, ֆինանսական

³ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016804b537b>

հաշվետվություններ, հրապարակումներ և այլ տեղեկություններ, ինչպես նաև իր թիմի անդամների տվյալներ (չախախտելով անձնական տվյալների պաշտպանության սկզբունքը):

Մեր կարծիքով, ՀԿ-ները հանրության առջև պետք է հաշվետու լինեն ոչ թե ֆինանսական, այլ թեմատիկ առումով, քանի որ հասարակությանը հետաքրքրում է տվյալ ՀԿ-ի կարողությունները և որքանով այն կարող է իրեն աջակցություն ցուցաբերել: Ահա այս առումով, պետք է նշենք, որ ՀԿ-ների գործունեության և նրա նպատկների ու խնդիրների արդյունավետ իրականացման նկատմամբ վերահսկող մարմին կրկին պետք է ճանաչվի ՀՀ արդարադատության նախարարությունը, իսկ ՊԵԿ-ը որպես ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմին պետք է պահպանի իր այդ հիմնական գործառույթը:

Հարկ է նկատել նաև, որ Օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորումներում բացակայում են տվյալ նորմը կիրառելու և չկիրառելու հնարավոր հետևանքների և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների ու կարգի մասին իրավական հիմնավորումները: Օրենքի նախագծով սահմանված չեն թե ինչպիսի պատժամիջոցներ են կիրառվելու այն ՀԿ-ների նկատմամբ, որոնք չեն հրապարակելու պահանջվող ֆինանսական հաշվետվությունը (տվյալներ) կամ հրապարակում են ուշացումով կամ ոչ պատշաճ և ոչ ստույգ տեղեկատվություն (տվյալներ) են հրապարակում: Այս դեպքում ստացվում է, որ լիազոր մարմինը հնարավորություն է ունենալու ընտրել և կիրառել պատժամիջոցներն իր հայեցողությամբ, ինչն էլ կարող է հանգեցնել հարկային ծառայողի անկառավարելի լիակատար ազատությանն ու չարաշահումներին: Եթե սույն Օրենքով նախատեսվի պատասխանատվության մեխանիզմներ ևս, ապա մեր կարծիքով այն իրապես դառնալու է մահակ բոլոր ՀԿ-ների համար: Այս պարագայում հարց է առաջանում, թե ՊԵԿ-ը ինչպես և ինչ մեթոդներով է առաջնորդվելու, որպեսզի վերահսկի հազարավոր ՀԿ-ների գործունեությունը և հաշվետվությունների ներկայացման ժամկետները, որոնք պետական գրանցում են ստացել, սակայն փաստացի գործունեություն չեն ծավալում:

Բացակայում են նաև սույն Օրենքի նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում կատարվող լրացումներ ու փոփոխություններ կատարելու անհրաժեշտության կամ դրա բացակայության հիմնավորումները, և Օրենքի նախագծի մշակման համար հիմք հանդիսացող այդ իրավական ակտերի ցանկը: Ակնհայտ է, որ սույն դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման ազդեցության գնահատում չի կատարվել, թե այդ փոփոխությունները որքան կարժեհան պետության և ոչ կառավարական կազմակերպությունների (ՀԿ-ների) համար ևս չկա իրավական և տնտեսական հիմնավորում կամ գնահատում:

Ֆինանսական հաշվետվությունը, որը պահանջվում է սույն Օրենքի նախագծով, իր մեջ ներառում է բավականին մանրամասն տեղեկատվություն, այդ թվում նաև անձնական տվյալներ: Եթե ֆինանսական հաշվետվությունը բաղկացած է լինելու հրապարակային և ոչ հրապարակային հատվածներից, ապա ինչ կարիք կա պարտավորեցնող նորմ ներառել մի Օրենքում, որն ըստ էության չի կատարվելու, և որևէ կազմակերպություն այդ տվյալը երբեք չի հրապարակելու, քանի որ այն

անձնական պաշտպանության ենթակա տվյալ (ներ) է և համարվելու է հաշվետվության ոչ հրապարակային հատված: Օրենքի նախագծով պաշտպանված չեն «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի⁴ պահանջները:

Ի դեպ, հասկանալի չէ նաև Օրենքի նախագծում «ֆիզիկական անձանց խումբ» ձևակերպումը (Օրենքի նախագծի 1-ին հոդված, գործող Օրենքի 24-րդ հոդ. 3-րդ մասի, 2-րդ կետ «աղբյուր» բառից հետո առաջարկվող լրացման բովանդակությունը): Եթե պարտադիր հրապարակվող հաշվետվության բաժնում այդ անձանց տվյալները հրապարակվում են, ապա հաջորդող նախադասությամբ ոչ հրապարակային հատվածում ֆիզիկական անձանց անձնական տվյալների հրապարակման համար ՀԿ-ներին տրվում է հայեցողական իրավունք: Բացարձակ հասկանալի չէ այս տարբերակման մոտեցումը, «ֆիզիկական անձինք» և «ֆիզիկական անձանց խումբ» ասելով Պեկ-ն ի՞նչ է հասկանում:

Մեր կարծիքով, լիազոր մարմինը պետք է ստեղծի տեղեկատվական մեկ ընդհանուր բանկ/կայք ՀԿ-ների մասին՝ անվանական կարգով, նշելով նրանց գործունեության ոլորտները, նպատակներն ու խնդիրները, ծրագրերի անվանումները և ինտերնետային կայքերի հասցեները, ղեկավար անձանց անվան նշումներով: Այն հնարավորություն կտա յուրաքանչյուր հետաքրքրասերի մուտք գործել այդ կայք և ծանոթանալ իր կողմից փնտրվող կազմակերպությանը վերաբերող տեղեկատվություն: Կամ եթե լիազոր մարմինը նպատակահարմար է գտնում, ապա կարող է ՀԿ-ների կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված հաշվետվություններից քաղել այն տվյալները, որոնք չեն խախտելու երրորդ անձանց իրավունքները, և հրապարակել, Օրենքում փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտություն չկա և չի առաջանում:

Ի դեպ, շահագրգիռ կողմը (տեղեկատվություն փնտրողը) այդ տեղեկատվությունը ստանալու համար Օրենքով սահմանված կարգով պետք է վճարի, ինչպես դա անում է բոլոր պետական և տեղական կառույցներից որևէ մեկի կամ որևէ կազմակերպության մասին տեղեկատվություն ստանալու դեպքերում: Օրինակ՝ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից ցանկացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռներեցի մասին տեղեկատվությունը հասանելի է, սակայն մանրամասն տեղեկատվության համար փնտրողը պետք է օրենքով սահմանված կարգով վճարի, ինչը կարգավորվում է նաև «Տեղեկատվության ազատության մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ Օրենքներով:

Այս պարագայում, առաջարկում ենք ՀԿ-ների համար Օրենքով սահմանել այդ հնարավորությունը. այն անձը, որը կցանկանա մանրամասն տեղեկատվություն ստանալ որևէ ՀԿ-ի մասին, ապա թող վճարի և վճարման անդորրագրի հիման վրա ձեռք բերի իր կողմից փնտրվող տեղեկատվությունը, իսկ այդ գումարը, կամ մի մասը կփոխանցվի ՀԿ-ի հաշվին, դա կլինի փոքր աջակցություն պետության կողմից ՀԿ-ներին:

Առաջարկում ենք նաև գործող Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն ընդամենը ստեղծել ՀԿ-ներին տրամադրվող պետական և տեղական դրամաշնորհների առցանց

⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80554>

տվյալների բանկ/կայք⁵, որը կպարունակի տեղեկություններ այն ՀԿ-ների մասին, որոնք դրամաշնորհներ են ստացել պետական կամ հանրային միջոցներից, ինչպես նաև կպարունակեն հանրային դրամաշնորհների մրցույթների անցկացման մասին տեղեկություններ, հաղթող ՀԿ-ների անվանումներն ու տվյալները, հետագայում նրանց ֆինանսական ու աուդիտի հաշվետվությունները⁶, թե ինչպես են ծախսել հանրային միջոցները: Շահագրգիռ կազմակերպությունները ստիպված չեն լինի յուրաքանչյուր նախարարության կայքում փնտրել մրցույթի հայտարարությունները, այլ հնարավորություն կունենան այն գտնել մեկ կայքում: Մա լիովին կհամապատասխանի ներկայումս գործող Օրենքի 24-րդ հոդվածի պահանջի լիարժեք կատարմանը, կապահովվի հանրային դրամաշնորհների տրամադրման գործընթացի թափանցիկությունն ու ՊԵԿ-ի կողմից մեջ բերված հանրության իրազեկումը:

Ավելորդ չենք համարում նշել, որ ՀԿ-ների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ պետական հարկային քաղաքականությունը վերանայելու և փոփոխելու փոխարեն, լիազոր մարմինը ձեռնամուխ է եղել ամբողջությամբ վերահսկելու բոլոր ՀԿ-ներին, անկախ նրանից նրանք հանրային միջոցներից օգտվել են թե ոչ: Այսօր առկա են բազմաթիվ խնդիրներ կապված ՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեության հարկային քաղաքականության հետ, որը հստակեցնելու և նոր մեխանիզմներ մշակելու կարիք ունի: Լիազոր մարմինն առ այսօր չի սահմանել ՀԿ-ների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու պարագայում ինչպիսի բովանդակությամբ ու կարգով են իրենց հաշվետվությունները ներկայացնելու, մասնավորապես եթե ՀԿ-ների գույքի ստացման աղբյուր են հանդիսացել նրա ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները: Պետք է նշենք, որ գործող օրենսդրությամբ ՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեությունը հարկվում է նույն կերպ, ինչ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունը, բացարձակ սահմանված չեն հարկային արտոնություններ կամ առանձնահատկություններ: Եթե պետության կողմից ՀԿ-ների համար հարկային արտոնություններ չեն սահմանվում, ապա նրանց վրա լրացուցիչ պահանջ և բեռ դնելն ուղղակի արդարացի չէ:

Եթե լիազոր մարմինը ոչինչ չունի անելու և կենտրոնացած է միայն ՀԿ-ների նկատմամբ ֆինանսական վերահսկողությունը խստացնելու ուղղությամբ, ապա առաջարկում ենք, որպես գործող Օրենքով ճանաչված լիազոր մարմին, ձեռնամուխ լինել Օրենքով «հանրային շահ» և «հանրային միջոցներ» բառակապակցությունները հստակեցնելու և սահմանումներ տալու գործում: Օրինակ՝ եթե հարկային մարմինը չի կարողանում հստակ պատկերացում կազմել կամ տարաբնույթ ընկալման տեղիք է տվել «հանրային միջոց» բառակապակցությունը, ապա այդ նպատակով հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ և դիմել ՀՀ կառավարությանը կամ Ազգային ժողովին՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար:

Ավելորդ չենք համարում նշել նաև, որ ՀՀ սահմանադրության 79-րդ հոդվածի (Որոշակիության սկզբունքը) համաձայն հիմնական իրավունքները և

⁵ Որը մինչ օրս գոյություն չունի:

⁶ Ի դեպ, այս մասին բազմիցս առաջարկել ենք ՀՀ արդարադատության նախարարությանը, որը ցավոք կյանքի չի կոչել:

ազատությունները սահմանափակելիս Օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Այսպիսով, հաշվի առնելով վերը շարադրվածը, լիազոր մարմնից պահանջում ենք՝

1. հանել շրջանառությունից Օրենքի նախագիծն իր վերը նշված բովանդակությամբ,
2. քննարկել ՀՀ արդարադատության նախարարությանը կրկին լիազոր մարմին ճանաչելու հարցը: Մենք գտնում ենք, որ այսօր լիազոր մարմին ճանաչված հարկային մարմինն ընդհանուր ոչինչ չունի հասարակական կազմակերպությունների հետ, բացի ֆինանսական տոտալ վերահսկողության մեթոդից,
3. քննարկել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ՀԿ-ներին որոշակի հարկային արտոնություններ տրամադրելու կարգի հարցերը,
4. քննարկել կամավորության վերաբերյալ օրենսդրական դաշտի հստակեցման հետ կապված հարցերը,
5. հրապարակել ՊԵԿ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները, որով իբրև հայտնաբերվել են չարաշահումներ ՀԿ-ների գործունեության ոլորտում:

Լևոն Ներսիսյան
Գործադիր տնօրեն